Կարկաչա

կրկնակ. Կարկաչա, կարկաչա,
Կարին կաչա, կարկաչա:

Կարմիր կովեն կաթ կուզեմ,
Կարմիր կովեն եղ կուզեմ,
Սև հավեն էլ հավկիթ կուզեմ,
Կարմիր հավկիթ ներկել կուզեմ:

կրկնակ. Կարկաչա, կարկաչա,
Կարին կաչա, կարկաչա:

Կարմիր հավկիթ դուրս բերեք,
Թուխ հավի հավկիթ բերեք,
Ով որ կտա, թող շեն մնա,
Ով որ չտա՝ չոր չորանա:

կրկնակ. Կարկաչա, կարկաչա,
Կարին կաչա, կարկաչա:

Ով որ չտա իմ հավկիթներ,
Մուկն ու կատուն՝ իրենց թթուն,
Ով որ ընձի հավկիթ կտա,
Աստված նրան հազար թող տա:

Կրկնակ. Կարկաչա, կարկաչա,
Կարին կաչա, կարկաչա: